

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919-1920
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Հայաստանի պետական արխիվների փաստաթղթեր և նյութեր)*

Հրատարակության է պատրաստել ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյանը:

№ 1

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի պ. Մինիստրին
Թիֆլիս

12 հոկտեմբերի 1919թ., ք. 183

Այսու պատիվ ունեմ գեկուցելու, որ մոտ օրերս ես տեսակցություն ունեցա Հունական միսիայի պետ պ. Ստավրիդակիսի հետ, որը զրույցի միջոցին շոշափեց երկու հարց, որոնց մա առաջնակարգ խնդիրներից է համարում, ուստի խնդրում է իմանալ Կառավարության հայեցակետը:

Հիշյալ հարցերն են՝ մի քանի հույն գյուղերի ազգաբնակչության Հունաստան գաղթելու տրամադրությունը և հունական զինվորական հատուկ զորամասերի կազմակերպումը:

Առաջին հարցի առթիվ պ. Ստավրիդակիսը, ինչպես և առաջներում, այս անգամ էլ շեշտեց, որ հույն կառավարության կողմից այդ գաղթի դեմ սկզբնական արգելքներ չեն հանդիպում, քայց չմայած դրան, տակտիկական մի քանի նկատառումներ նկատի ունենալով, ինքը չի կամենում, որպեսզի այդ գաղթը տեղի ունենա: Անցանկալի է մահ այն տեսակետից, որ հույների գաղթը Կարսի մահանգից կթուլացնի հայերին և ընդհակառակը, կուժեղացնի մուսուլմանական տարրը: Ուստի պ. Ստավրիդակիսը չի դադարում գործել այն ուղղությամբ, որպեսզի հույները մնան իրենց տեղերում: Սակայն պ. Ստավրիդակիսը գտնում է, որ նրա ջանքերը նպաստավոր ելք կունենան միայն այն դեպքում, եթե նա արժանանա Հայաստանի կառավարության աջակցությանը, իսկ այդ աջակցությունը կայանալու է հույն ժողովրդի ինքնապաշտպանության գործերին նպաստելու մեջ, մի քան, որ տեղի կունենա, եթե դադարեցվի հույների զինաթափումը: Պ. Ստավրիդակիսին հայտնի է, որ Կարսի զինվորական իշխանությունները Խորասանի շրջանի Միսիմադան և Եմիքեյ գյուղերում զինաթափ են անում:

* Հանդեսի 1999թ. № 1-ում տպագրվել է Հ. Ա. Ավետիսյանի հոդվածը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Բարթիկյանի թարգմանությամբ հրատարակված «Հունական արխիվային փաստաթղթեր հայ հունական հարաբերությունների մասին Առաջին հանրապետության շրջանում (1918-1920թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի սահմանում:

Այս հրատարակման մեջ ներկայացվում են հայերենական արխիվներում պահվող՝ մույն քննայով 19 փաստաթուղթ (1919-1920 և 1922թթ.):

հույն ազգաբնակչությանը:

Հիշյալ գյուղերի զինաթափումը զրկում է հույներին քրդական հարձակումների առաջն առնելու հնարավորությունից:

Պ. Ստավրիդակիսը խնդրեց ինձ միջնորդել կառավարության առաջ, որպեսզի վերջինս դադարեցնի մահանգի հույն ազգաբնակչության զինաթափումը, որովհետև նորա հավատացած չեն իրենց անձի և գույքի անձեռնմխելիության մեջ:

Այս մասին ես հեռագրել էի սույն ամսի 4-ին, թ. 164 գրությամբ և որի պատասխանին դեռ սպասում եմ: Հույն քնակիչներին իրենց տեղերում պահելու նպատակով Հունական միսիան կազմակերպում է մթերքների և հագուստեղենի առաքումը և այդ քանում ևս հույս ունի Հայաստանի կառավարության աջակցության վրա, որովհետև հույները միշտ եղել են հայերի դաշնակիցներ:

Երկրորդ հարցին՝ այն է հունական հատուկ զորամասերի կազմակերպումը Հայաստանում, պ. Սաավրիդակիսը տալիս է ոչ պակաս կարևորություն:

Հունական միսիայի պետի ասելով և Վրաստանում, և կամավորական քանակում հարուցվել է հույների զինակոչի խնդիրը, սակայն հունաց կառավարությունը միշտ էլ բողոքել է դրա դեմ, որովհետև հույները ժուսական խնդիրներում իրենց համարում են չեզոք, ուստի չեն կամենում խառնվել: Մինչդեռ հունական հատուկ զորամասերի կազմակերպման առթիվ, որի համար կանչվում են կամավորական քանակից հույն սպաներ Դենիկիների համաձայնությամբ, հունաց կառավարությունը ասելիք ունի, որը կկայանա հույների ապահովության խնդրի մեջ քրդական ռոմագությունների պատճառով: Հիշյալ զորամասերի զինվորական գործողությունները պ. Սաավրիդակիսը դնում է Հայկական հրամանատարության հսկողության տակ:

Պ. Սաավրիդակիսը, շեշտելով, որ հույները սեփական շահեր Հայաստանում չունեն, որոնք կարող էին Հայաստանի կառավարության մեջ կասկածներ հարուցանել, գտնում է, որ Հայաստանի կառավարության կողմից արգելք այդ զորամասերի կազմակերպման դեմ պետք է որ չլինի:

Պ. Ստավրիդակիսի տեղեկությունների համաձայն, Հայկական զինվորական շրջաններում, մասնավորապես գեն. Փիրումյանը, դեմ են այդպիսի զորամասեր կազմակերպելուն: Նկատի առնելով հայկական զորքի շահերը՝ հիշյալ շրջաններում առաջարկ է եղել հույներին ևս ենթարկել զինակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Եթե գեն. Փիրումյանի տեսակետին առաջնություն տրվի, պ. Սաավրիդակիսը, իր ասելով, այլ հանրապետություններում հույների զինակոչ անելու հնարավորությունից կզրկվի: Նա հիմք չի ունենա ասելու, որ հույները իրենց չեզոք են պահում, որովհետև իսկույն նրան մատնացույց կանեն Հայաստանում կատարվող զինակոչի վրա:

Նկատի առնելով իր քաջատրությունները, պ. Սաավրիդակիսը խնդրում է Հայաստանի կառավարության համաձայնությունը, որպեսզի Հայաստանում ինքնապաշտպանության նպատակով կազմակերպվեն հունական հատուկ զորամասեր:

Հետևանքին խնդրում է իրեն իրազեկ պահել՝

Ի տեղի Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի

մինիստրության Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչի

Մ. Թումանյան

Երևանում
ստացված է 20 հոկտեմբերի 1919թ.
ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 357(2), ք. 407:

№ 2

Հեռագիր

ՊՐ. ՎԵՆԻՋԵԼՈՍԻՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՊՈՆՏՈՍԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

3/16 հունվարի 1920թ.

Երկու ֆեդերատիվ երկրների ներկայացուցիչները, մանրամասն քննելով Անդրկովկասում ստեղծված դրությունը՝ բուլշևիկների վերջին հաջողություններից հետո և նրանց անընդհատ առաջխաղացումը, որ սերտ կապված է թուրքերի հետ, կարիք ունեն ահագանգ տալ քաղաքակիրթ Եվրոպային և նրանից խնդրելու այս անգամ մախազգուշական միջոցներ ձեռք առնել, որպեսզի մոր բռնություններ և կոտորածներ տեղի չունենան թուրքերի կողմից:

Հատկապես հետևյալ պահանջներն են ներկայացնում՝

1. Նրանք խնդրում են մանդատային պետությանը և ընդհանրապես խաղաղության կոնֆերանսին՝ հնարավորին չափ շուտ դաշնակից զորքեր ուղարկել, որոնք կկարողանան բուլշևիկների առաջխաղացումն արգելել:

2. Նույնպես խնդրում են հունական կառավարությանը՝ Պոնտոսի հույներին օգնություն ցույց տալու, որոնք հայերի հետ լրիվ համաձայնեցրել են, որ ցամաք հանված հունական զորքերը կառաջանան դեպի Երզնկա և Էրզրում՝ քրքական կանոնավոր և անկանոն զորքերի առաջն առնելու համար, իսկ հայկական բանակը կգրադվի դեպի Կովկաս բուլշևիկների պատահական առաջխաղացումով:

3. Խնդրում են հունական կառավարությանը՝ հիմնկվանից անհրաժեշտ զենք և ռազմամթերք ուղարկել՝ հայկական բանակը կազմակերպելու համար:

Հայաստանի կառավարության մախազահ

ԽԱՏԻՍՅԱՆ

Տրապիզոնի արքեպիսկոպոս

ԽՐԻՉԱՆՏՈՍ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 102, ք. 19:

№ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՊՈՆՏՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՓԱՐԻՉՈՒՄ: 1919թ. ապրիլին Փարիզի հայ համագումարի մեջ խնդիր եղավ պատասխանել Պոնտոսի հույների ներկայացուցիչների կո-

չին՝ քանակցելու Հայաստանի և Պոնտոսի ապագա քաղաքական հարաբերությունների մասին: Խնդիրը հետևյալն էր.

Հայ պատվիրակությունը խաղաղության համաժողովին ներկայացնում է հուշագիր, որը Հայաստանի սահմանների մեջ առնում է մաս Տրապիզոնի կուսակալության արևելյան մասը, մինչև Իրիսի գետաբերանը: Այն հիման վրա, որ՝

1. 1914թ. փետրվարի 8-ին ստորագրված հայկական բարենորոգումների մեջ Հայաստանի 6 մահաձգներին միացված էր պետությունների (Ռուսաստան, Գերմանիա) կողմից Տրապիզոնը՝ իբրև բնական ելք ծովի վրա:

2. Հելլեն կառավարությունը իր ներկայացուցիչ Վենիզելոսի միջոցով պաշտոնապես հայտարարում էր, թե իր պետությունը չի պահանջի Տրապիզոնի կուսակալությունը և ջերմապես կփափագի, որ այդ երկրամասը միանա Հայաստանին:

3. Հայաստանը, դառնալով անկախ պետություն, իբրև ցամաքային երկիր, անհրաժեշտաբար պետք ունի մի ելքի դեպի ծով, և մերձավոր ու բնական ելք կա այդ շրջանում:

Այս հուշագրին պատասխանեցին Պոնտոսի հույների ներկայացուցիչները, որոնք կազմված էին Սարսելի հույն վաճառական Կոնստանտինիտիսի նախագահությամբ գաղթական հույներից, մի հուշագրով բողոքելով հայերի տիրապետական ձգտումների դեմ: Հրապարակեցին մաս ֆրանսերեն հոդվածներ, ուր հայտարարում էին, թե Պոնտոսի հույները չեն ցանկանում «թուրքական լուծը փոխարինել հայկական լծով, և թե իրենք պատրաստ են անհրաժեշտության դեպքում պաշտպանել իրենց իրավունքը»: Հակառակ այս բոլոր արտահայտության, այնուամենայնիվ, անհրաժեշտ էին գտել քանակցել հայերի հետ: Փարիզի հայ համագումարը, նկատի առնելով նրանց կողմից եղած առաջարկությունը, իր կողմից նշանակեց հանձնաժողով 5 հոգուց՝ Արմեն Գալտ, Արշակ Չոպանյան, պրոֆեսոր Արմեն Տեր-Հակոբյան, Թերզիբաշյան՝ պրոֆեսոր Արտաշես Խաչատրյանին հրահանգելով ծանոթանալ նրանց առաջարկությունների հետ:

Առաջին փուլում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը կարելի է ամփոփել հետևյալ 4 քանաձևերի մեջ:

1. Պոնտոսը ձգտում է դառնալ առանձին հանրապետություն, այս դեպքում Հայաստանին ազատ ելք կտա Մև ծովի վրա՝ Ռիզե և Աթինա մավահանգստներով, և հայերը չպիտի արգելք հանդիսանան այս անկախությանը:

2. Պոնտոսը կարող է կապվել Հայաստանին (զինակցություն) քաղաքական կապերով՝ մնալով Ավստրո-Հունգարիայի միությանը:

3. Պոնտոսը կմիանա Հայաստանին «Confederation-ի» (դաշնակցային) կապերով՝ մնալով Եվրոպային:

4. Պոնտոսի մի մասը՝ մինչև Իրիսի գետաբերանը, ուղղակի կմիանա Հայաստանին, որպես նրա մահաձգներից մեկը՝ ունենալով իր ներքին անկախությունը:

Խոսակցության ընթացքում հայերի կողմից հայտարարվեց, թե մենք ոչ մի արգելք չենք ցանկանում հարուցել Պոնտոսի անկախության դեմ, ուստի կարողացեք անկախ դառնալ, եթե կարող եք և հաջողության դեպքում կարող եմք խորհել միացման մյուս ձևերի մասին: Մակայն նրանք, պահելով հանդերձ անկախության գաղափարը, այնուամենայնիվ, գալիս էին եզրակացության՝ մոտենալ մյուս ձևերին: Մենք մերժեցինք երկրորդ կետը ինչպես և նրանք՝ չորրորդը՝ առարկելով, թե Պոնտոսի հույն ժողո-

վուրդը երբեք չպետք է համաձայնի՝ լինել Հայաստանի Հանրապետության իշխանության տակ, ուստի և մնում էին առաջինը՝ Պոնտոսի անկախության և երրորդ՝ “Federation” (դաշնակցային) քանաձևերը:

Այս արդյունքը զեկուցելով մեր համագումարին այն քաղաքական արտահայտության, թե այս կետի վրա ալ պետք է մնալ առանց “Federation-ի” մանրամասնությունների մեջ մանելու և վերջնական պաշտոնական ձև տալու այս քանակցությանը, քանի որ ամեն ինչ հրաժարիլ իրենց անկախության գաղափարից, և հետո, մեր խնդրի այս անորոշ կացության մեջ մեզ համար կարևորությունից զուրկ և անպատակահարմար է վերջնական որոշման հանգեղը:

Հակառակ ամեն կողմն արտահայտած բոլոր փափագին՝ պաշտոնական պայմանագիր մը կնքելու՝ մեր կողմն քաղաքական կերպով խույս տրվեցավ այս քայլին: Իսկ այսուհետև կայացած քանակցություններն ոչինչ չավելացրին արդեն եղածի վրա:

Բ. ԵՐԵՎԱՆԻՄ: Փարիզի քանակցություններից անցան ամիսներ. Համաձայնական պետությունների վերաբերմունքը դեպի Թուրքիայի հալածված քրիստոնյա ազգերի ազատագրությունը և Օսմանյան կայսրության պահպանումը շատ փոփոխություն կրեց, որով և Պոնտոսի անկախության ձգտումը, թվում էր, թե անորոշության կարգն էր անցել: Ուստի և մրանք խորհում էին Հայաստանի հետ միավորվելու մասին և մի պատվիրակություն Հայաստան եկավ Փարիզում սկսած քանակցությունները շարունակելու համար:

1920թ. հունվարի 2-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության վարչապետ պ. Ալ. Խատիսյանի քննադրանում, մի կողմից, բոլոր մախարարների և մի քանի անպաշտոն անձների մասնակցությամբ, մյուս կողմից՝ Տրապիզոնի մետրոպոլիտ Խրիսանֆի և Թիֆլիսի հեղինակալու հյուպատոս Մտավրիդակիսի ու իր հետևորդ սպայի ներկայությամբ կայացավ խորհրդակցություն, որի եզրակացությունը կարելի է ամփոփել այսպես.

1. Հույն մետրոպոլիտը Պոնտոսի սահմանը ընդգծեց. արևելքից՝ ռուսական հիմ սահմանագլուխը, արևմուտքից՝ Սինոպ, հյուսիսից՝ Պարիսար լեռների ջրաբաշխը՝ մինչև Վալուսի լեռնաշխարհը և Գալլ գետի (Քիլիկիա) ձախ կողմի ջրաբաշխը՝ մինչև Ամասիա-Սինոպ:

2. Պոնտոսը միանում է Հայաստանին “Federation” (դաշնակցային) պայմաններով՝ մնալ Ըվեյցարիայի, այսինքն, պետք է ունենան՝

ա. դաշնակցային միացյալ խորհրդարան.

բ. դաշնակցային արտաքին քաղաքականություն.

գ. դաշնակցային ելևտային (ֆինանսների) դրություն.

ե. դաշնակցային մաքսային դրություն.

զ. դաշնակցային քանակ.

է. դաշնակցային հաղորդակցական միջոցներ՝ թղթատար, հեռագիր, երկաթուղի, մավազնացություն.

ը. տեղական ներքին գործերի համար լիակատար ինքնավարություն:

Այս միությունն իրագործելու համար որոշվեց.

1. միացյալ ուժով աշխատել. մախ՝ դիվանագիտական ամեն ջանք գործ ղնելով և երկրորդ՝ անհրաժեշտության պարագայում զենքի զորությամբ ձեռք բերել երկու երկրների քաղաքական ազատությունը:

2. Նախ՝ Պոնտոսի հետ վտխամական մերկայացուցիչներ, երկրորդ՝ հեղինակալության հետ քանակցել Աթենքում հայ հանրապետության ներկայացուցիչ ունենալու համար և հեղինակ մեկ ներկայացուցիչ՝

Հայաստանում, երրորդ՝ հելլեն մի ներկայացուցիչ Հայաստանում խորհրդակցելու հանրապետության զինվորական ներկայացուցչի հետ, ապագա անհրաժեշտ ձեռնարկությունների համար:

3. Երևանում կատարված քանակության ու կայացած համաձայնության արդյունքը երկու կողմերն էլ հաղորդում են Փարիզի իրենց ներկայացուցիչներին:

Տեղեկագրեց

պրոֆեսոր Ա. Խաչատրյան

4 հունվարի 1920թ.

Երևան, գրանցվել է հունվարի 6-ին № 87

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 182, ք. 10-12:

Երևանյան խորհրդակցության արդյունքների մասին Արտաքին գործերի նախարարության ընդհանուր քարտուղար Տեր-Հակոբյանը և դիվանապետ Վ. Սարգսյանը 1920թ. հունվարի 6-ին հատուկ նամակներով տեղակալ պահեցին Տրապիզոնի թեմի առաջնորդ գերապատիվ Գարեգին Վարդապետին, հունվարի 16-ին՝ Կոստանդնուպոլսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Թախտանյանին: Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 259, ք. 10,13 (Հ. Ա.):

№ 4

Доклад Министра иностранных дел РА в Совет Министров РА

4 января 1920г. № 14

С. Секретно

В Совет Министров

В конце декабря прошлого года в Тифлис прибыл митрополит Хрисанф, который, по-видимому, приехал на Кавказ, преследуя политические цели.

Я телеграфировал нашему представителю в Тифлисе г. Евангулову с просьбой содействовать тому, чтобы греческий митрополит заехал и в Эривань. Уже давно чувствовалась необходимость более тесного сближения с греками, в особенности трапезундского района, где у нас имеются как общие интересы, так и спорные вопросы. Необходимо и можно было воспользоваться приездом митрополита Хрисанфа и выяснить наши и их точки зрения на этот район, имея в виду будущее устройство Объединенной Армении.

Приезд этот состоялся 1 января. Митрополит Хрисанф прибыл из Тифлиса в специальном вагоне в сопровождении представителя Греции в Тифлисе г-на Ставридакиса. Прием был оказан торжественный: был выставлен почетный караул с музыкой, от имени правительства приезжих встречали товарищ министра внутренних дел, генеральный секретарь министерства иностранных дел и комендант города; помещение было отведено во Французской миссии.

В тот же день митрополит сделал мне визит, и в течение пятичасовой интимной беседы было затронуто много важных вопросов политического характера. Выяснилось, что митрополит Хрисанф является председателем делегации на Мирной конференции так называемого Понтийского государства; едет из Парижа и хорошо осведомлен о положении дел. Целью его приезда является желание трапезундских греков прийти к соглашению с правительством Армении по вопросам о будущих взаимоотношениях между Арменией и Понтийским государством. Своему приезду в Армению он придает характер визита к католикосу. Понтийско-трапезундская государственная единица ими мыслится от Ризы до Синопа по Черному морю, а в глубину материка по горному хребту, идущему параллельно с побережьем Черного моря. На этой территории будут проживать до 800 000 турок, 350 000 греков и 70 000 армян. Будущее устройство этой единицы, в связи с организацией Объединенной и независимой Армении, мыслится греками тройко:

1. Трапезундско-понтийская единица в вышеуказанных единицах составляет федеративную часть Армении.
2. Она составляет самостоятельную единицу при общей с Арменией таможней и некоторых отраслях государства.
3. Она составляет совершенно самостоятельное государство, которое заключает союз с Арменией. В этом случае Армении уступается порт Атинэ.

Были затронуты в общей форме также вопросы о совместных выступлениях, в случае неудачного разрешения и армянского и понтийского вопросов на Парижской конференции.

2 января состоялось заседание Совета министров при участии членов "Аревелян бюро", - высшего органа партии "Дашнакцутюн". На обсуждение были поставлены вопросы, выдвинутые митрополитом Хрисанфом. Совещание признало своевременным и необходимым прийти к известному соглашению с греками Трапезундского района, защищая точку зрения федеративного устройства будущей Армении. Совещание признало, что порт Атинэ ни в коем случае не может удовлетворить экономическим интересам и торговле Армении. Было также признано необходимым сговориться с ними же по вопросу о совместных выступлениях против Турции, в случае если Парижская конференция не оправдает наших надежд.

В тот же день вечером состоялся обед, а затем совещание, в котором, кроме митрополита Хрисанфа, г. Ставридакиса и всех министров, участвовали профессор Хачатрян, как человек знакомый с греко-армянскими переговорами и член парламента Г. Малхас, хорошо знакомый с делами Трапезундского района.

На этом совещании после детального обсуждения выдвинутых митрополитом вопросов, было заключено пока еще устное соглашение, главные пункты которого сводятся к следующему:

1) Понтийская государственная единица в вышеуказанных границах входит в состав Армении, как ее федеративная часть, с единой таможней, войском, почтой и телеграфом, Федеративным советом и внешней политикой. Во внутренних своих делах Понтийская федеративная часть Армении управляется местным сеймом.

2) Наша и Понтийская делегации в Париже действуют совместно в деле признания Армении и Понта.

3) В случае неуспеха нашего общего дела на Мирной конференции армяне и греки делают совместные выступления, вплоть до вооруженного восстания, чтобы добиться признания общей независимости.

Это соглашение было принято со следующими оговорками: соглашение не действительно:

1) если оно будет противоречить соглашению, которое может быть заключено нашей делегацией в Париже с греческой по тому же вопросу;

2) если оно будет противоречить требованиям мандатэра, если таковой будет назначен Мирной конференцией для Армении;

3) если оно будет противоречить тем границам, которые будут отведены Армении Парижской конференцией.

4) и вообще, если будут налицо другие обстоятельства.

Докладывая о принятом соглашении, я прошу постановлением Совета министров поручить мне подписать таковое соглашение от имени правительства Армении, а также вести дальнейшие переговоры с представителями Понта по вопросам, вытекающим из этого соглашения.

Министр иностранных дел

А. Хатисян

ЦГИА РА, ф. 200, оп.1, д.182, л. 5-9.

Итоги совещания были утверждены на заседании правительства Армении 7 января 1920г. (д. 259, № 11).

№ 5

Конфиденциально

Его преосвященству греческому митрополиту
в Трапезунде Хрисанфу

10/1 1920 № 173

Я счастлив еще раз подтвердить ту общность интересов, которая связывает греческий народ и в частности понтийских греков с народом армянским, и которая в будущем обещает вы-

литься в тесное сотрудничество обоих народов и их ответственных руководителей на благо и процветание их родины.

Разговор с Вашим преосвященством, любезно посетившим столицу Армении и ее правительство, вполне утвердил меня в этой уверенности и искренне заставил желать дальнейшей совместной деятельности обоих народов, в вопросах их общего интереса.

Крайне тяжелая обстановка, в которой приходится в настоящее время работать правительству Армении и общая неясность будущего мирового политического положения, вынуждает меня с сугубой осторожностью принимать какие-либо обязательства от имени правительства Армении. Тем не менее я рад возможности уже при нынешних обстоятельствах подтвердить от имени правительства Армении некоторые из пунктов, затронутых в разговоре Вашего Преосвященства со мною и в Совете министров, в бытность Вашу в Эривани.

Правительство Армении, предоставляя решение о будущих границах Понта и Армении целиком постановлению Мирной конференции, теперь же готово принять предложенные Вами условия:

1) о вхождении Понты в состав Армении в качестве федеративной единицы, с единым войском, валютой, почтой, телеграфом, путями сообщения — водными и сухопутными, единым парламентом и внешней политикой и с предоставлением Понту во внутренних своих делах руководствоваться решением местного понтийского органа.

2) о совместном выступлении греческой и армянской делегаций при Мирной конференции, для защиты перед последней требований и интересов обоих народов.

Соответственные указания правительством Армении уже посланы в Париж армянской делегации.

Еще раз выражая уверенность в продолжении нашей совместной деятельности на благо обоих наших народов, остаюсь

Министр-председатель и
Министр иностранных дел Хатисов
Заведующий Политическим отделом Якулов
Делопроизводитель Джрбашян

ЦГИА РА, ф. 200, оп.1, д. 259, л. 151-152. Также д. 189, л.1,18 (на французском языке).

№ 6

Письмо министра-председателя Республики Армения А.
Хатисяна греческому митрополиту Трапезунда Хрисанфу

17 января 1920г.
Тифлис

Ваше преосвященство!

В дополнение моей ноты от 10 января за № 173, имею честь довести до вашего сведения, что так как переданная вашему преосвященству нота была рассмотрена и принята правительством и парламентскими кругами, я не имею права вносить в нее новые поправки или добавления без разрешения этих же органов; также ввиду того, что вошедшие в ноту вопросы составляют в настоящее время предмет обсуждения делегаций Армении и Понта и во избежание притворечий с названными делегациями, я нахожу необходимым, в дополнение к предыдущей ноте, сделать следующие заявления.

Понт, составляя федеративную с Республикой Армения часть, пользуется полной автономией в своих внутренних делах, имеет свой местный парламент, но, имея объединенную с таковой же Республикой Армения армию с общим верховным главнокомандованием, а также имея общие с таковыми же Республики Армения следующие государственные установления: - военное министерство, систему денежного обращения, иностранную политику, почту и телеграф, сухопутные и морские пути сообщения, а также, за исключением местных, общие государственные финансы, будет иметь для решения всех этих общих одинаково для Армении и Понта вопросов один только парламент.

Остаюсь, ваше преосвященство, с глубочайшим к вам почтением, ваш покорный слуга.

А. Хатисян
Министр-председатель

Республики Армения
с подлинным верно: - За Секретаря — Тер-Никогосян
ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 182, л. 22.
Նույնը ֆրանսերեն, էջ 21:

№ 7

Մթննք, 10 մարտի 1920թ.

Հայաստանի կառավարության պրն. մախազահին

Հելլեն ազգը ցավագնորեն հուզված և վրդովված է Կիլիկիայում իր հայ եղբայրների կրած մոր տառապանքներից, դառնորեն ցավում է, որ ի վիճակի չի եղել օգնության հասնելու նրանց: Նա իր պառլամենտի միաձայ-

նությամբ ուղարկում է նրանց իր ամենախոր համակրանքների հավաստիքը:

Հելլեն պառլամենտի նախագահ՝ Սոֆուլիս
Առաաքին գործերի մինիստրությունում
ստացված է 23 մարտի 1920թ. մակագրվել է ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ
մտից ք.1684
ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 462, ք.12:

№ 8

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻՆ՝ Հայկական պատվիրակության նախագահին

Լոնդոն, Չառլստոն հոթել

Ձերդ գերազանցություն

Պարոն գնդապետ Կաթինենիտիսի միջոցով իմացա, որ Ձերդ գերազանցությունը Հայաստանի նկատմամբ մեր ունեցած հարաբերության մեջ անգիջողություն է նկատում մեր կողմից, դա ինձ զարմացրեց:

Շատ եմ ցավում այդ կարծիքի վերաբերյալ, մանավանդ, որ ես միշտ կողմնակից եմ եղել մեր երկու ժողովուրդների սերտ համաձայնությանը և իմ ուժերի ներածին չափ աշխատել եմ այդ նպատակն իրականացնել: Ես ինձ քույլ եմ տալիս հիշեցնելու Ձերդ գերազանցությանը, որ 1919թ. մարտ ամսին, Պոնտոսի պատվիրակության նախաձեռնությամբ բանակցություններ սկսվեցին Փարիզում երկու երկրների միջև՝ ֆեդերացիա կազմելու հիման վրա: Եթե այդ բանակցությունները վերջնական լուծման չհանգեցին, ես համարձակվում եմ պնդել, որ դա Պոնտոսի պատվիրակության մեղքովը չէր:

Անշուշտ, մեր երկու ժողովուրդների միջև կարող են թյուրիմացություններ ծագել երբեմն, սակայն, հիմնականում հնարավոր է բեղմնավոր և փրկարար միասնական աշխատանք տանել:

Բարեբախտաբար, այժմ այդպիսի դժվարություններ չկան: Ձերդ գերազանցությանը հայտնի է, որ Թիֆլիսում համաձայնություն է գոյացել Հայաստանի առաջին մինիստր՝ պարոն Խաչիսյանի և նորին գերազանցություն՝ Տրապիզոնի մետրոպոլիտ Պոնտոսի հույների ներկայացուցչի միջև, Հայաստանի և Պոնտոսի ֆեդերացիայի հիման վրա: Այդ համաձայնությունը հաստատվել է № 173 հեռագրով, պարոն Խաչիսյանի և պարոն Յակուլյանի միջոցով. միևնույն ժամանակ փետրվարի 12-ին ստորագրվեց նաև զինվորական համաձայնություն:

Այս պայմաններում, ինձ թվում է, երկու ժողովուրդների ներկայացուցիչների պարտքն է՝ ներշնչվել արտասահմանում ազնվորեն իրար պաշտպանելու ձգտումով: Համագործակցության այս քաղաքականությունը մի երջանիկ նախատիպ է, որ Արևելքում հնարավոր եղավ հաստատել: Հետևաբար, ես քույլ եմ տալիս Ձերդ գերազանցության ներկայացնել իմ կարծիքով նկատած մի քանի դիտողություններ Հայաստանի և Պոնտոսի հարաբերությունների հարցում: Ոչ ոք չի կարող ժխտել, որ Հայաստանի ձգտումը Սև ծովում ելք ունենալու համար միանգամայն օրինական երևույթ է: Սակայն չի կարելի ոչ հայկական մի հողամաս պարզապես մի-

ացնել Հայաստանին, միայն նրա տնտեսական կարիքները հոգալու հասար: Դա դեմ կլիներ այն սկզբունքներին, որի հիման վրա ժողովուրդներն իրավունք ունեն իրենց իրենց քախտը որոշել ազատորեն: Միակ հարմար լուծումը, միակ արդար լուծումը, որ կարողանար ապահովել խաղաղ հարաբերությունները, դա կլիներ ծովափնյա ժողովուրդների ազատ ու ինքնարեր ֆեդերացիայի կազմումը հայ ժողովուրդի հետ:

Պոնտոսի ներկայացուցիչներն ամբողջ սրտով մաղթում էին հասնել այդ նպատակին, և Թիֆլիսում կայացած համաձայնությունը այդ ձգտման սկիզբը դրեց: Լուրջ պատասխանատվություն կստանձնեք նա, ով կիրառվեր վերոհիշյալ համաձայնությունից, ինչպես այն փորձում է Փարիզում հայկական պատվիրակության նախագահ պարոն Ահարոնյանը: Պնդել պոնտական տարածքի մասնահատման վրա և պահանջել, որ Հայաստանին միացնեն միայն Տրապիզոնից մինչև Խոքա, դա անհնարին րան է:

Երեկ խաղաղության կոնֆերանսին ներկայացրի մի հուշագիր, որտեղ ես ցույց եմ տվել Պոնտոսի հարցը և նրա ժողովրդի անունից խնդրել եմ երկրի ֆեդերատիվ միացումը Հայաստանի հետ, արդեն Թիֆլիսում կայացած համաձայնության հիման վրա: Սակայն Հայաստանին ոչ թե միացնելու Պոնտոսի տարածքի միայն մի բեկորը, այլ գոնե հույների կողմից քնակեցված բոլոր այն տարածքները, որոնք աշխարհագրական ու տնտեսական մի ամբողջություն են կազմում հայկական նահանգների հետ: Մենք ողջունում ենք Հայաստանի ազատագրումը թրքական լծից:

Այդ ոգով, ես մեծ հույսով դիմում եմ Ձերդ գերազանցությանը՝ համուն այն համերաշխության, որ պետք է գոյություն ունենա մեր երկու հարևան ժողովուրդների միջև, որոնք իրենց համատեղ չարչարանքներով և իրենց շահերով պետք է որ իրար հասկանան:

Բարեհաճեցեք

Գ. Ժ. ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՒԴԵՍ

Պոնտոսի ժողովի նախագահ

1920թ. մարտ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 259, ք. 148-150:

№ 9

Письмо министра-председателя Республики Армения А.

Хатисяна председателю палаты депутатов Греции

23 марта 1920г.

Афины

Глубоко тронут вашей очень любезной телеграммой от 10 марта. Бесконечно счастлив узнать о новом свидетельстве братства двух народов. Народ и правительство Армении посылают героическому и благородному греческому народу и его парламенту выражения их живой признательности и глубокого признания, а также те симпатии, которые с самого начала армянский народ и его правительство питало к греческому народу. Правительство Армении надеется, что дружеские отношения двух на-

родов будут способствовать процветанию и развитию двух стран. 23 марта 1920г. № 1804.

Министр-председатель правительства Армении

Хатисян

ЦГИА РА , ф. 200, оп. 1, д. 462, л. 13.

№ 10

Секретно

г. Министру

иностранных дел

Ереван, 21 апреля

1920г., № 239

По имеющимся сведениям делегаты греческого населения обращались к представителю Греции в Тифлисе с просьбой об отмене призыва на военную службу греков, но получили от него указания, что все греки, проживающие на территории Армении, должны отбывать воинскую повинность на общих основаниях с остальными гражданами.

Военный министр приказал просить Вас выразить представителю Греции глубокую благодарность за столь справедливое и благоприятное разъяснение.

Начальник Военного штаба

Республики Армения

Полковник Багдасарян

Начальник мобилизационного отделения

Капитан Тихонов

ЦГИА РА , ф. 200, оп.1, д. 442(П), л.148.

Получено 22 апреля

1920г. № 2261.

№ 11

Начальнику канцелярии Министерства
иностранных дел Республики Армения

3 мая 1920г.

№ 6952

По сношению Вашему от 26 апреля за № 2569 военный министр приказал уведомить, что греки будут призываться лишь в пограничную стражу в своих же регионах Карсской области и

получать содержание в размере 1000-1400 рублей наравне с добровольцами, из коих формируется пограничная стража.

И. А. начальника военного штаба
полковник Багдасарян
Начальник мобилизующего отдела
полковник
Начальник отделения
капитан Тихонов

Ստացվել է մայիսի 4-ին, նո. 2467
գեկուցվել մայիսի 6-ին,
կատարված է մայիսի 17-ին նո. 2946.
ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 462, ք. 14.

Ռազմական համագործակցության հարցերը քննարկելու համար հունիսի 22-ին Երևան ժամանեց հունական բանակի գնդապետ, Անդրկովկասում հունական զինվորական առաքելության պետ Կասենիոտիսը: Հանդիպում ունեցավ Հանրապետության մինիստր-նախագահի հետ (գործ 462, ք. 36, 38):

№ 12

22 օգոստոսի 1920

Ընդհանուր բանակատեղի

№ 13879

ԱՌ ՎՍԵՍԱՓԱՅԼ ՏԵԱՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽՍԻՍՅԱՆԻ,

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Հայկական կառավարության բարեբաստիկ հաստատման առթիվ հանուն հելլենական բանակին կը մատուցանեմ ջերմագին շնորհավորություններս և անկեղծ մաղթանքներս որպեսզի Ձեր տոհմիկ կառավարությունը կարենա շուտափույթ տարածել իր հովանավորությունը բոլոր այն հայերուն վրա, որոնք դեռ կը հեծեն բարբարոս լուծին տակ:

Հելլեն Ազգը մեծ խանդավառությամբ կը հետևի այն առաջին քայլերուն, զոր հայ ցեղը այնչափ արդյուն քափելն և դարավոր գերութենն վերջ, կառնն դեպի իր ազատագրումը Անդրկովկասի մեջ՝ նոր փայլ մը տալով արևելյան քաղաքակրթության:

Այս առթիվ հայ զինվորական սպարապետի տրամադրության տակ կը դնեմ 50 հելլեն Պատերազմական խաչեր, որպեսզի անոնցմով պատվեր կուրծքերը Ձեր հավասարապես քաջարի մարտիկներուն, որոնք կը կռվին

մեր հասարակաց Սուրբ դատին համար՝ հանուն Ազատության, Արդարության և Զաղաքակրթության:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՀԵԼԼԵՆ
ԶՕՐԱՅ**

ՓԱՐԱՍԶԵՎՈՓՈԼՈՍ

կա. Հ. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ հանձնարարականը՝ «պատասխանել», 25 հոկտեմբերի 1920թ.

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 616, ք. 2:

№ 13

Փարիզ 23 օգոստոսի 1920 № 5521

**ՓԱՐԻՋԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ**

Պատիվ ունեմ տեղեկացնելու, որ ս.թ. օգոստոսի 17-ով թվագրված Չերմամակը ստանալուց հետո ես թագավորության արտաքին գործոց նախարարությանը գեկուցեցի, որ Հայաստանի Հանրապետությունը շուտով Աթենք կուղարկի պ. Տիգրան Չախյանին: Վերջինս նշանակվել է արտակարգ լիազոր ներկայացուցիչ և խորհրդական:

Շտապում եմ Չեզ հայտնել, պ. Պոլիզիսից իմ անունով ստացված գեկուցագրում ասվում է, որ նորին գերագանցություն թագավորը իր համաձայնությունն է տվել պ. Չախյանի այս նշանակության առթիվ և թագավորական կառավարությունը, որը նույնպես գոհունակություն է հայտնել պ. Չախյանի՝ Աթենքում Հայաստանի արտակարգ լիազոր ներկայացուցիչ նշանակվելու կապակցությամբ, ուրախ է համագործակցել նրա հետ՝ ի շահ երկու երկրների ու նրանց երկու ժողովուրդների, որոնց հարաբերությունները զմալով էլ ավելի են զարգանում:

Ընդունե՞ք, պ. նախագահ, իմ խորին հարգանքի և հաջողության մաղթանքները:

Ա. ՌՈՍԱՆՈՍ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 616, ք. 5, 6:

Հունական կառավարության որոշման մասին օգոստոսի 30-ին տեղյակ պահելով Հայաստանի արտաքին գործերի նախարարին՝ Ա. Ահարոնյանը միաժամանակ հայտնում էր, որ Գ. Մինապյանը (Օսմանյան կայսրության նախկին նախարար) ստանձնել է Փարիզում Հայաստանի Հանրապետության ընդհանուր հյուպատոսի պաշտոնը (ն. տ., ք. 3) (Հ. Ա.):

№ 14

Из Батума № 7925
31/VIII- 1920

Эривань
Министру-председателю
Оганджяну

Сегодня с греческим пароходом "Элефория" из Константинополя прибыли 17 армян добровольцев. Пароход привез также 1000 ружей и 4000000 патронов. № 579.

За Генконсула Айрапетян

Получена почтой 14/IX в 14 час.
ИПИА РА, ф. 200, оп. 1, д. 442(II), л. 378.

№ 15

6 սեպտեմբերի 1920թ.
№ 5134

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՍԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՎԵՆԻՋԵԼՈՍԻՆ

ԱԹԵՆՔ

Խորապես վրդովված եմ Ձեզ վրա կատարված մահափորձի կապակցությամբ և միաժամանակ ուրախ եմ, որ Ձեզ՝ Ձերդ պայծառափայլության համար այն լուրջ հետևանքներ չի ունեցել:

Իմ կառավարությունն ու ժողովուրդը քարեհաճ են Ձերդ գերազանցության նկատմամբ և քաջ գիտեն, թե ինչ մեծ քայլացականություն եք տաժում Դուք և Ձեր ժողովուրդը հայերի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ
ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 462, ք. 69:

№ 16

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՅ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋԱՆՅՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻՆ՝
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ

ՍԻՐ

Հայաստանի և Հունաստանի միջև քարեկամական հարաբերությունների պահպանման ցանկությամբ լցված և հաշվի առնելով այն քարեկամությունը, որ միավորում է մեր երկու ժողովուրդները, մենք Ձերդ գերազանցության երկրում արտակարգ լիազոր ներկայացուցիչ ենք նշանակել պ. Տիգրան Չախյանին, որը խաղաղության կոնֆերանսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության քաղաքական խորհրդի անդամ էր:

Պ. Չախյանը, ելնելով իր մանդատով իրեն տրվող լիազորություններից, ինչպես և առաջնորդվելով նրանով, թե ինչպիսի խորը և ջերմ զգացումներ է

տաժում Հայաստանի Հանրապետությունը Չերդ գերազանցության ու Չեր ժողովրդի նկատմամբ, իր բոլոր միջոցները կօգտագործի երկու հրկրների միջև հարաբերությունների զարգացմանը և հայերի ու հույների միասնությանն ու համերաշխությանը նպաստելու համար: Լիազորությունները, որոնք արված են պ. Չախյանին, մեզ թույլ են տալիս հուսալ, որ նրա ամաքելությունն արժանի է Հայկական պետության վստահությանը և Չերդ գերազանցության հավանությանը:

Ելնելով Չերդ գերազանցության հավանությունից՝ մենք գտնում ենք, որ նա կդառնա Հայկական պետության ներկայացուցիչը Չերդ գերազանցության մոտ և կարտահայտի այն ջերմ զգացումները, որ Հայաստանը տաժում է Չերդ գերազանցության և հեղինակական պետության փառքի ու բարգավաճման համար:

Գրված է Երևանում, 20 սեպտեմբերի, 1920թ.

Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ
Ներքին գործոց նախարար
Գրասենյակի պետ

Հ. ՕՀԱՆՁԱՆՅԱՆ
Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ
ՍԱՐԲԵՅԱՆ

ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 616, ք. 12:

Ստեղծվեց հյուպատոսական ծառայություն նաև Չմյուռնիայում:

№ 17

8 հոկտեմբերի 1920

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԵՆԻՋԵԼՈՍԻՆ

ԱԹԵՆԸ

Չերդ գերազանցություն

Իմ ճանապարհորդության ավարտին, մինչև ես կթողնեի Կ.Պոլիսը Երևան վերադառնալու համար, իմ պարտքն էմ համարում մեկ անգամ ևս գրավոր շնորհակալությունս հայտնել այն ընդունելության համար, որին ես արժանացա Չեր կառավարության կողմից, Հունաստանում և Չմյուռնիայում ճանապարհորդությանս ընթացքում:

Մեր թշնամիների ռազմական ակտիվությունը վերջին ժամանակներս ծանր կացության մեջ է գցել Հայաստանը, և քանի որ ձեր մեջ մենք տեսնում ենք մեր երկրի իսկական բարեկամին, ես եռանդազին խնդրում եմ Չերդ գերազանցությունից մեզ մոտ ուղարկել հույն ներկայացուցչի, որը մեզ իրագեկ կպահի բոլոր իրադարձություններին:

Իմ կառավարությունը և ողջ Հայաստանը հավատում են հունական քաջ բանակին և Չերդ գերազանցության բարյացակամությանը:

Ընդունեցեք, Չերդ գերազանցություն, երախտագիտության և հարգանքի իմ հավաստիացումները:

Հայաստանի Մինիստրների խորհրդի նախկին նախագահ, այժմ արտակարգ լիազոր խառնիսյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 462, ք. 10:

Վենիզելոսին հղած մեկ այլ նամակում, նույն օրը, հոկտեմբերի 8-ին խառնիսյանը տեղյակ էր պահում, որ Չատիկ Խանգադյանը ստանձնել է կապի սպայի պարտականությունները Հունական բանակի գլխավոր

հրամանատար Փարսկեվոպոլսի մոտ (վերջինս հայտնվել էր անանձին գրություն - Հ. Ա.), տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, ք. 9:

№ 18

Ул. Дюфреной № 2

Париж, 22-го апреля 1922 года.

Господину Хатисяну, бывшему Председателю Совета министров
и члену делегации Армении

Господии председатель!

20 апреля с/г. я имел честь препроводить Вам выдержку из газ. "Акшам" от 11-го апреля 1922 года, заключающую прокламацию генерала Папуласа, адресованную Комитету Спасения в Смирне.

Из этой прокламации явствует, что в настоящее время армяне поддерживают "всемерно" воинственные приготовления греков.

Телеграмма из Афин от 8-го апреля, перепечатанная в той же газете, сообщала, что какая-то Армянская делегация была принята упомянутым греческим генералом, и что делегация эта заявила о том, что армяне готовы, на всем протяжении фронта, жертвовать своей жизнью и имуществом для поддержки действий греческой армии. Эта делегация заверяла, что это решение было принято ею в полном согласии с Армянскими национальными делегациями в Париже и Лондоне.

В течение нашей последней и многочисленной беседы я с полным удовлетворением встретил Ваши категорические заявления о том, что делегация, к которой Вы принадлежите, пришла к убеждению, что окончательное разрешение печального армянского вопроса, могущее удовлетворить обе заинтересованные стороны, может быть достигнуто только на основе непосредственного дружественного соглашения между Турцией и Арменией.

Поэтому и делегация Северного Кавказа, будучи очень рада видя, что в порядке этих идей, Вы сочли полезным воспользоваться пребыванием Оттоманской делегации в Париже, непосредственно войти в отношения с ней, я действительно с удовольствием облегчил этот контакт и от имени нашей делегации, я сделал все возможное, чтобы привлечь возможно серьезное внимание Оттоманского правительства на значение благоприятного решения Армянского вопроса, с точки зрения Кавказской Конфедерации.

Вы согласитесь, госп. председатель, что ныне получаемые нами из Смирны сведения противоречат с начертанной Вами линией проведения политики Вашей делегации и носят характер,

могущий сильно повредить переговорам, уже так разумно начатым Вами.

Я не могу скрывать разочарование, причиненное мне чтением телеграммы из Смирны, и в надежде какого-либо недоразумения, прошу сообщить, насколько правильны заявления ген. Папуласа и Армянской делегации в Смирне, главным образом относительно занятой Вашей делегацией позиции по отношению к армянскому движению в Смирне.

Г. Баммат — председатель делегации Горской республики Северного Кавказа на Парижской конференции.
ЦГА ПОО РА, ф. 4004, оп. 3, д. 28.

№ 19

Дипломатическому представителю Республики Армения в Грузии
Т. Бекзаяну

Турецкие войска большими силами сделали нападение на наши войска в Карс, имея целью занять всю Карсскую область и может случиться, что в течение двух дней мы принуждены будем оставить Сарикамыш. Положение очень тяжелое. Необходимо немедленно обратиться к Люкку и Корбелю, настоять на том, чтоб они срочно телеграфировали своим правительствам о движении турецких войск и просили бы принятия всех возможных мер. Поговорите также с Леграном и потребуйте от него, как от союзника Турции, немедленно оказать давление на турок прекратить военные действия. Просите греческого представителя срочно сообщить обо всем греческому правительству и узнать, могут ли греческие войска со своей стороны перейти в наступление и тем самым ослабить турецкое движение. Немедленно обратитесь также к греческому правительству с просьбой отпустить нам срочно нефть, которая необходима для отправки на фронт наших войск и снаряжения. Объясните, что если нефть запоздает, создается опасное положение для Карсской области и также для Батума. Узнайте от представителя Врангеля, может ли Врангель оказать нам помощь снаряжением или высадить десант в районе Трапезунда. № 5980 (летучий) 28 сентября.

Мининдел Республики Армения
ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 602, л. 400.